ԱՄԵՆ ՄԵԿԻՆ՝ ԻՐԵՆԸ

Ղարաբաղյան շարժման առաջին օրերից իրենց ժողովրդի հետ էին երկու հայ գրողներ՝ Սիլվա Կապուտիկյանը և Զորի Բալայանը: Գրականության մեջ առաջինի վաստակը, իհարկե, անչափելի էր: Քաղաքականության մեջ՝ նույնպես: Սիլվա Բարունակովնան թերևս միակն էր հայ գրողներից, որ համարձակվում էր այլախոհություն դրսևորել: Զորի Բալայանը, ընդհակառակը, ավելի շատ սիրված ու փայփայված էր իշխանության կողմից: Երբ նա գիրք էր գրում Խորհրդային Հայաստանի հերթական հոբելյանի առթիվ, ՄՄՇԿՄ-ների քարտուղարներն իրենց տերությունների սահմաններին էստաֆետով իրար էին հանձնում գրողին. մի շքեղ կերուխումը ավարտված՝ սկսվում էր մյուսը...

Ղարաբաղյան շարժման արդյունքում իշխանության եկավ մի ուժ, որն այդ շարժման բուն շարժիչ ուժին չէր սիրում, իսկ ինչ-որ չափով նաև ատում էր: Զորի Բալայանն արագ հաշտվեց ստեղծված իրողության հետ: Սիլվա Կապուտիկյանը ոչ մի առիթ չկորցրեց ճշմարիտ խոսք ասելու իր ժողովրդին, և դրանից իշխանության ատելությունը նրա հանդեպ ավելի կատաղի դարձավ: Ասենք, հիմա էլ շատ անձերի ու հրատարակություններ առիթը չեն կորցնում հնարավորին չափ ցավոտ հարվածներ հասցնել բանաստեղծուհուն: Զորի Բալայանին, որն այժմյան իշխանության հենասյուներից մեկն է իրավամբ, հիմնականում քծնում են:

Այս ամենը, ինչպես նաև բազմաթիվ այլ բաներ կարելի էր նաև չհիշել, եթե օրերս հանդիսավորագույն պայմաններում չնշվեր բանաստեղծուհու հոբելյանը: Սիլվա Բարունակովնան, ինչպես իր ողջ կյանքում, իր իսկ արտահայտությամբ, ծափերի ու ծաղիկների մեջ էր: Զորի Բալայանը, դարձյալ ինչպես միշտ, իշխանության հետ՝ նախագահական օթյակում...

Ոչ թավշե, ոչ արյունոտ ոչ մի հեղափոխություն այս աշխարհում, ի վերջո, ոչինչ չի շրջում գլխիվայր ու յուրաքանչյուրն ստանում է այն, ինչին միշտ ձգտել է...